ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2022 թվականի N _____-Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3.1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հաստատել՝

- համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությանը ներկայացվող պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի.
- համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվության ձևաչափը՝ համաձայն N 2 հավելվածի.

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվության ձևաչափը տեղադրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ **Ն. ՓԱՇԻՆՅԱՆ**

2022 թ. .....

Երևան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2022 թվականի

_____-ի N _____-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն Հավելվածով սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4.1-ին կետով սահմանված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվություններին ներկայացվող պահանջները, կարգավորվում են հաշվետվությունները կազմելու և ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:
2. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեի ծախսերում նախատեսված է համայնքների բյուջեներին հատկացնել անվերադարձ կարգով տրվող մասհանումներ (այսուհետ՝ համայնքային մասհանում):
3. Համայնքային մասհանումների ծախսերի մասով ընթացիկ տարվա ծրագրի վերաբերյալ յուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը տարեկան հաշվետվություն է ներկայացվում համայնքի ավագանու հաստատմանը:
4. Հաշվետվությունները կազմվում են սույն որոշման 2-րդ հավելվածով հաստատված ձևաչափին համապատասխան և հաստատվում ստորագրությունով:
5. Հաշվետվությունը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացվում է համայնքային մասհանումների ծախսերի ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված ազդակիր բնակավայրը ներառող համայնք՝ Ծրագիրն իրականացնողի կողմից:
6. Ներկայացված հաշվետվությունում թերությունների հայտնաբերման դեպքում հաշվետվությունը ներկայացնելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում հաշվետվությունն հետ է ուղարկվում, ուղարկման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում թերությունների վերացման նպատակով՝ դրա մասին ծանուցում ուղարկելով ներկայացնողին (էլեկտրոնային ներկայացնելու դեպքում՝ օգտվողի էլեկտրոնային փոստի հասցեին):
7. Ծրագիրն իրականացնողը 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է ճշգրտված հաշվետվություն (էլեկտրոնայինի դեպքում՝ էլեկտրոնային ստորագրությամբ) կամ պարզաբանում ճշգրտում չկատարելու վերաբերյալ:
8. Համայնքներին բաշխված համայնքային մասհանումների ծախսերի մասով հաշվետվությունն առանձին հրապարակվում է տվյալ համայնքի պաշտոնական կայքում համայնքի ավագանու հաստատելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Վերջինիս բացակայության դեպքում համայնքի ղեկավարի ներկայացմամբ հրապարակվում է համապատասխան մարզպետարանի պաշտոնական կայքում:

Հավելված N 2

ՀՀ կառավարության 2022 թվականի

_____-ի N _____-Ն որոշման

<u>Ձևաչափ</u>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

ՀՀ _____ մարզի _____համայնքի

_____ ազդակիր բնակավայրում (-երում)

Համայնքային մասհանումների ծախսման իրականացված ծրագրի մասին

(Եթե ծրագիրն իրականացվել է համայնքի մի քանի ազդակիր բնակավայրերում, ապա նշել դրանց անվանումները)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 4.1-ին կետով սահմանված՝ համայնքային մասհանումների ծախսման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) անվանումը `

_____
_

_____
_:

Ա) ԾՐԱԳՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրի իրավական հիմքերը (նշել համայնքի ավագանու որոշման և ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ամսաթիվը և համարը)՝ _____ _____:

1. **Ծրագրիսկիզբը և ավարտը՝** _____:
2. **Ծրագրի նախագծային արժեքը՝**_____ հազ. դրամ:
3. **Համայնքի առկա խնդիրները և նախնական վիճակի նկարագրությունը՝**(Ծրագրով նախատեսված ազդակիր բնակավայրի (համայնքի) սոցիալ-տնտեսական զարգացման առնչությամբ) _____:
4. **Ծրագրի նպատակը և Ծրագրով հաստատված ուղղակի և վերջնական ակնկալվող արդյունքները՝**_____:
5. **Ծրագրի շահառուները՝**(նկարագրել շահառուների խումբը՝ ըստ տարիքային, մասնագիտական, կարիքավորության կամ այլ գործոնների և նախատեսվող թիվը) _____:
6. **Ծրագրի շրջանակում նախատեսված միջոցառումները և դրանց ընտրության հիմնավորումները՝**(նշել Ծրագրի, ինչպես նաև ծրագրում

ընդգրկված միջոցառումների ընտրման հիմնական պատճառները)_____:

Բ) ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

1. **Ծրագրի իրականացման փաստացի արժեքը՝**_____ հազ. դրամ:
2. **Ծրագրի փաստացի շահառուները՝**(նշել փաստացի շահառուների խումբը և թիվը ամբողջ ծրագրի ընթացքում) _____:
3. **Ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումները՝**(նշել փաստացի իրականացված միջոցառումները՝ յուրաքանչյուրի մասով կատարված աշխատանքների, նկարագրությամբ) _____:
4. **Ծրագրի իրականացնողները և աջակցողները՝**(թվարկել Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման մասով իրականացման մասնակիցների (ՏԻՄ, մասնավոր ընկերություն, ոչ առևտրային կազմակերպություն, միջազգային գործընկեր կամ հասարակական կազմակերպություն) անվանումները _____:
5. **Ծրագրիփաստացի վերջնական արդյունքների նկարագրությունը՝** _____:
6. **Հաշվետվության հրապարակումը՝**(նշել կայքէջում տեղադրման ամսաթիվը, ՁԼՄ-ներում հրապարակման դեպքում՝ նաև տալ հղումները) _____: